ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2021 թվականի N1-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել << Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 26-ի արտահերթ (1) նիստի օրակարգը, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝	*Կողմ (5)*	*Դեմ(0)*	*Ձեռնպահ(0)*
1. Ախտոյան Դ.			
2. Եսայան Ա.			
3. Կարապետյան Գ.			
4. Մարտիրոսյան Վ.			
5. Շամբարյան Հ.			

Համայնքի ղեկավար՝ ***Լ. Գրիգորյան***

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու 2021 թվականի
հունվարի 26-ի N1-Ա որոշման

ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԱՐՏԱՀԵՐԹ (1) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ

1. ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ.ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

2. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ.ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

3. ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ.ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

4. ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ.ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2021 թվականի N2-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հարկային օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի, <<Կուտակային կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի 8-րդ մասի 8.1 կետի, <<Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառցված վնասների հատուցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1 մասի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի <<Մերձավանի համայնքապետարանի, <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ և <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N39-Ա որոշման հաստատված հավելվածներ թիվ 2-ը և թիվ 3-ը շարադրել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումը տարածվում է 2021 թվականի հունվար ամսվանից ծագած իրավահարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝	*Կողմ (5)*	*Դեմ(0)*	*Ձեռնպահ(0)*
1. Ախտոյան Դ.			
2. Եսայան Ա.			
3. Կարապետյան Գ.			
4. Մարտիրոսյան Վ.			
5. Շամբարյան Հ.			

Համայնքի ղեկավար՝ ***Լ. Գրիգորյան***

Հավելված 2
ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու 2021 թվականի
հունվարի 26-ի N3-Ա որոշման
Հավելված 2
ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 14-ի N39-Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ <<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ

1.Աշխատակիցների քանակը- 23

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

(հազ.ՀՀ դրամ)

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային 1/մեկ/ դրույքաչափը	Ամսական աշխատավարձը
1.	Տնօրեն	1	135,0	135,0
2.	Մեթոդիստ ուսումն. գծով տնօրենի տեղակալ	1	125,0	125,0
3.	Հաշվապահ	0,5	120,0	60,0
4.	Դաստիարակ	4,48	115,0	515,2
5.	Բուժքույր	0,75	115,0	86,25
6.	Դաստիարակի օգնական	4	95,0	380,0
7.	Դաշնակահար	1	115,0	115,0
8.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0,5	115,0	57,5
9.	Պարուսույց՝ պարի խմբավար	0,5	115,0	57,5
10.	Անգլերեն լեզվի մանկավարժ	0,5	115,0	57,5
11.	Ռուսաց լեզվի մանկավարժ	0,5	115,0	57,5
12.	Տնտեսվար	0,5	95,0	47,5
13.	Խոհարար	1	95,0	95,0
14.	Խոհարարի օգնական	1	95,0	95,0
15.	Օժանդակ բանվոր	0,5	95,0	47,5
16.	Հավաքարար	0,5	95,0	47,5
17.	Դերձակ	0,25	95,0	23,75
18.	Լվացքարար	0,25	95,0	23,75
19.	Պահակ	2	95,0	190,0
20.	Դոնապան	1	95,0	95,0
	Ընդամենը	21,73	-	2311,45

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
Համայնքի ավագանու 2021 թվականի
հունվարի 26-ի N3-Ա որոշման
Հավելված 3
ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 14-ի N39-Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
<<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ

1.Աշխատակիցների քանակը -9.

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

(հազ.ՀՀ դրամ)

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Ամսական աշխատավարձը
1.	Տնօրեն	1	125,0	125,0
2.	Հաշվապահ	0,5	115,0	57,5
3.	Գեղ.մասի աշխատակից	1	110,0	110,0
4.	Գրադարանավար	1	110,0	110,0
5.	Սպորտ հրահանգիչ	0,5	95,0	47,5
6.	Հսկիչ օպերատոր	1	95,0	95,0
7.	Հավաքարար	2	95,0	190,0
8.	Դռնապահ	1	95,0	95,0
	Ընդամենը	8,0	-	830,0

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2021 թվականի N3-Ա

ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի դրույթներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2021 թվականի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ *Կողմ (5)* *Դեմ(0)* *Ձեռնպահ(0)*

1. Ախտոյան Դ.
2. Եսայան Ա.
3. Կարապետյան Գ.
4. Մարտիրոսյան Վ.
5. Շամբարյան Հ.

Համայնքի ղեկավար՝ ***Լ. Գրիգորյան***

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու 2021 թվականի
հունվարի 26-ի N3-Ա որոշման

ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ

1. Համայնքում առաջացող կենցաղային աղբի ծավալը, մոտավոր հաշվարկներով, կազմում է տարեկան 800 խորանարդ մետր:

2. Սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 70 հեկտար: Համայնքի ամբողջ տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է համայնքապետարանի կողմից շաբաթական երկու անգամ՝ չորեքշաբթի և կիրակի օրերին: Աղբահանությունն իրականցնող անձանց հետ /աղբատար մեքենայի վարորդի, աղբահանության բանվորի/ կնքվել են <<Ժամկետային աշխատանքային պայմանագրեր>>: Աշխատավարձի վճարումը կկատարվի համայնքի վարչական բյուջեի միջոցներից:

3. Համայնքում աղբի տեսակավորում չի կատարվում, աղբի հավաքման, պահման նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղեր, տարողություններ՝ աղբամաններ կամ կոնտեյներներ չկան:

4. Աղբի փոխադրումն իրականացվում է նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը: Աղբ տեղափոխող փոխադրամիջոցը /տեսակը՝ բեռնատար, մակնիշը՝ ԶԻԼ MMZ4502, համարանիշը՝ 36DN964, քանակը՝ 1/ պատկանում է ֆիզիկական անձի: Փոխադրամիջոցի սեփականատիրոջ հետ կնքվել է <<Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր>>:

5. Աղբը տեղադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրում, որը գտնվում է համայնքից մոտ 10 կմ հեռավորության վրա: <<Էկո կենտրոն>> ՍՊԸ հետ 2020 թվականի դեկտեմբերի 28-ին կնքվել է <<ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքի կարիքների համար կոշտ կենցաղային թափոնների ընդունման և պահեստավորման ծառայությունների գնման պայմանագիր>> N ՀՀ-ԱՄ-ՄՀ-ԾՄՊ-21: Նշված ծառայության վճարումը կկատարվի համայնքի վարչական բյուջեի միջոցներից:

6. Համայնքում սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տարածք չկա:

7. Համայնքի տարածքում իրականացվող աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվելու են համայնքի բյուջեից 2021 թվականի համար՝ 7 068 000 ՀՀ դրամով:

2021 թվականի համար համայնքի վարչական բյուջեի եկամտային մասում նախատեսվել է հավաքագրել ազգաբնակչությունից, համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական անձանցից և ԱՁ-ներից՝ աղբահանության վճար 3 600 000 ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2021 թվականի N4-Ա

ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2021 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝	*Կողմ (5)*	*Դեմ(0)*	*Ձեռնպահ(0)*
1. Ախտոյան Դ.			
2. Եսայան Ա.			
3. Կարապետյան Գ.			
4. Մարտիրոսյան Վ.			
5. Շամբարյան Հ.			

Համայնքի ղեկավար՝ ***Լ. Գրիգորյան***

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու 2021 թվականի
հունվարի 26-ի N4-Ա որոշման

ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ

1. 1- ին նիստը 2021 թվականի փետրվարի 12-ին.
2. 2-րդ նիստը 2021 թվականի ապրիլի 12-ին.
3. 3-րդ նիստը 2021 թվականի հունիսի 14-ին.
4. 4-րդ նիստը 2021 թվականի օգոստոսի 12-ին.
5. 5-րդ նիստը 2021 թվականի հոկտեմբերի 12-ին.
6. 6-րդ նիստը 2021թվականի դեկտեմբերի 13-ին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ